

րակզգին Մինայի: Ասոր և Վիբանանու միջոց տարածուած երկիրն ալ զուրկ է յանտառաց, և այսպէս էր Հրէից տերութեան ատենն ալ, վասն զի բոլոր երկիրն արմատեօք մշակէին՝ իրենց բաղմութեան ապրուստի համար. իսկ երբ օտար ազգերն ճնշուած թողուցին երկիրն բարձրատափերը՝ զոր խնամով կը մշակէին, անոնցմէ իջած Հեղեղներն ալ աւրըշտրկեցին ստորին դաշտերը. արօտք ապականեցան, և հարկ եղաւ ժողովրդեան՝ գաղթելու յօտար աշխարհս, ուր մասամբ վտարեց զիրենք քաղաքական հարկ կամ բռնութիւնն ալ: Այնուհետեւ մինչև հիմա Պաղեստինոյ Հոռչակեալ բարեկի ծոցը շատ ցամբած է. Յորդանան գետն անգամ նուազեալ պղտորեալ հեղեղ մը դարձած է. Վիբանանու մայրիքն անգամ նիհարցեր ցածցեր են, հազիւ 8 կամ 10 հատ մը կը գտուի գերահրուշակ մեծերէն: Ի վերայ այսք ամենայնի հին բարբերութեան վկայ են քանի մը քերական հովտաց բերքն, արմաւենին, պանանը, շաքարի եղեգը, ծանտաթղենին, նարնջենին, կիտրոնին, փտուղն, եղջիւրենին, նուննին և այգին, և այլ պէսպէս պաղատու ծառք և խաւարտք: Սամարիա և Գալիլիա ունին և կաղնեաց ու կնձնեաց անտառներ:

Թեղօջ, սօսի, արքակաղնի, տօսախ, մուրտ, վարդ, բենեկնի, ազալէա, դափնի, ակասիա, ուտանի, և այլն. գետնի վրայ ալ շատ տեսակ խոտեղէնք, խիժաբեր փուշք, և ստորալեռնեայ ծաղկունք շատ տեսակ: Այսպիսի բուսոց տեսակներ կը յիշուին յաճախ ՚ի Հին և ՚ի Նոր կտակարանս, յորոց և Տէրն մեր Քրիստոս շատ անգամ ընծայեց յառակ և ՚ի նմանութիւն:



Վիբանանու հիւսիսային գարատափք կը բերեն լաւ թթենիներ, որով շերամք կը դարմանին, և պատուական այգիներ, զորս կը մշակեն Մարոնիք և Տիւրքիք, փոխանորդք հին բնակչաց երկիրն:

Յորդանանու եզերքը կը գտուին դափնեվարդք, սլասփր, գիւհի, նոճի, հացի,

Ա Ր Զ -

Ա Ր Զ - Կ Ա Տ Ո Ւ Ի

Այս եզական կենդանին զոր ֆիւլիէ չորբոտանեաց մէջ ամենէն վայելուչն կը համարի, մինչև վերջի ատեններս անձանօթ էր Եւրոպիոյ կենդանաբանական թմանգարանաց, և առաջին ան-

դամ 'ի բարձանց Ռիպեթի բերուեցաւ 'ի Լոնտա, ուր կը պահուի մինչև ցայսօր կենդանաբանական պարտիզին մէջ, և ահա նոյն այն կենդանին է զոր կը տեսնայ ընթերցողն յառաջիկայ պատկերի:

Այս կենդանւոյն մորթը թանձր է, բուրդն երկայն, և մարմնոյն վերին

տաքին կողմը սևադոյն: Յուր կը միթնադոյն է. և աչքերէն մինչև բերանը դազաթնահայեայ լայն զիծ մը կ'ինընայ կարմրագոյն ու մոխրագոյն բուրդով խառն:

Այս Լոնտայի կենդանաբանական պարտիզին մէջ եղած Ալը-կատուն գլխէն մինչև ազւոյն արմատն ունեցած

երկայնութիւնը գրեթէ քսան և երկու բթաչափ է. մինչդեռ առանձին ազւոյն երկայնութիւնը տասն և վեց բթաչափի կը հասնի. իսկ կենդանւոյն բոլորական բարձրութիւնն է ինը բթաչափ, և կը խոր միջին հաշուով ութ լիպրանդղիական:

Այս վայելչաձև ու գեղեցկագոյն կենդանին կը բնակի Հիմալայա լեռանց հարաւային արեւելեան կողմը. ծովուն երեսէն իբրև եօթն հազարէն մինչև տասն և երկու հազար ոտք բարձրութեամբ: Բնապատմից մէջ այս կենդանւոյն վրայ առաջին անգամ տեղն 'ի տեղը մեզ տեղեկութիւն տուողը Քիււլիէ գաղղիացին եղաւ. որոյ ըսածին հա-



Գ Ն Տ Ո Ւ

կողմը ներկեալ 'ի գոյն ստուերաներկի. իսկ գլուխն ինչպէս և ազին զեղնագունի կը զարնէ, որ և ունի մէկ քանի գալարուն խոպոպներ: Երեսը, կզակն և ականջաց ներքին կողմը սպիտակագոյն են, մինչդեռ որովայնն, ազւոյն վերջին ծայրն և ականջաց ար-

մեմատ Ալը-կատուն խոտակեր է, և կերածն է պտուղ, արմատ և տնկոց ծիլեր. ուսկից զատ կ'ուտէ դարձեալ հաւկիթ, փոքրիկ թռչուններ, կաթ և պարարտ նիւթեր: Առաւօտն և իրիկունը միայն կ'ուտէ, իսկ օրուան միւս մասը քնով կ'անցընէ: Յինքեան դիրքնտեղ է, ան-

մլաս, բնդունակ կրթութեան և կա-
տուի պէս խաղաւէր. ձայնն արջի ձայ-
նին կը մտնենայ. և թէ որ փայփայուի,
կատուի փայփայանաց առեն հանած
ձայնին նման ձայներ կը հանէ: Արջ-
կատուին ձագը կծկիկ մը պէս փաթու-
թեալ կը ծնանի, գլուխն աղիւովը ծած-
կեալ:

ՕԳՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԻ ԿԵՆԴՐԱՆԵԱՑ

Փոխանակ կենդանեաց բարձրագոյն
վախճան ու նպատակ ընծայելու և գող-
ցես մարդոց հաւասարելու, ինչպէս կ'ընէ
այժմեան շնահաւատութիւնը, շատ աւելի
բանաւոր կը թուի բնին որ կենդանիք
տնկոց պէս մարդկան ծառայելու և եր-
կրագունես զարգարիլու համար սակղ-
ծուած են:

Տնկոց նկատմամբ մեր բաժնն տվեալ
յայտնի է, ուստի աւելորդ կը համարվիմք
երկայնաբանել հօս. բաւական է հարցը-
նել միայն անադատն ուղեորող ճանա-
պարհորդին թէ ինչպէս կը տաղնապին
զսիրտ նորա անձկութեամբ և երկիւղի-
ւայն մուռնաւորիչ երաշտայեալ միայնու-
թիւնը, զորս ստիպեալ է հատանել ա-
ռանց դոյզն կանաչութեան կամ կաթիլ մը
ջրոց հանդիպելու. որ եթէ զիպուածով փո-
քրիկ ուխտիսի մը պատահելու ըլլայ, կ'ող-
ջունէ զայն իբրև երկարծամանակեայ բա-
ցակայ բարեկամ, և վախճան կը համարի
զայն իր անտաննիկ նեղութեանցը: Բոլոր
բուսական աշխարհը կամ թագաւորու-
թիւնը մեծամեծ ծառայութիւններ կրնայ
մատուցանել մարդկան, և կան մէկ քանի
բոյսեր որ նոյն իսկ ինքն յինքնան հարստու-
թեան ազդիւր են: Մեղրիկեան ճեղկարգե-
կին (agave) օրինակի համար, օգտակար
է իր ամեն մասամբը. արմատէն չուտն կը
չխուի, բունէն՝ ատաղձ, փուշէն՝ դամ և
ասեղ:

Այս տունկին տերեւին մէջ տեղը փոստ-
րակ մը կը ձեւանայ, ուր կը ընկուի ամեն օր
բաղդրահամ ու պայծառագոյն հեղանիթ
մը, և գրեթէ տարոյ չափ անդադար կը
ներողութի: Թանձրայնելով այս հեղանի-
թը կը փոխակերպի 'ի շաքար, որ եթէ
խառնուի ընդ ջրոյ, յետ չորեքօրոց կամ
հինգօրեայ խմորման կծու համ կ'առ-

նու. որոյ վրայ հիթէ յաւելուս նորնջի և
կամ՝ վիմոնի կճեպ, արբեցուցիչ զօրու-
թիւն կը ստանայ: Արբազնոցոյ ամեն
կողմը աստուածային նախախնամ տեսչու-
թիւնէ պատուածեալ իրեն յատուկ առան-
ձին տունկերն ունի, բնակողաց պէտքին ու
կարօտութեան յարմար. իսկ այն բանն որ
ամենուն անհրաժեշտ կարևոր է, ամեն
կողմ գրեթէ կը գտնուի, ինչպէս է արմը-
տիքը, որ կը բուսնի սկսեալ 'ի բևեռաց
մինչև ցհասարակասն, վասն զի ժողովըր-
դոց սարկանաց զխաւոր հիմն է:

Բայց զառնալով մեր առաջարկեալ նիւ-
թոյն, կ'ըսեմք որ կենդանեաց մարդկան
մատուցած ծառայութիւնքն և օգտակա-
րութիւնքը բազմաթեանակ են, և թէ որ
ուզենայինք զամենքն ալ յիշատակել հօս,
խօսքերնիս շատ կ'երկարէր, և թերևս
չէինք ան կրնար կատարելապէս մեր նպա-
տակին հասնիլ, ինչու որ շատ կենդանիք որ
'ի սկզբան անօգուտն կը համարուէին, ըստ
բարդաւաճելոյ արուեստից և գիտութեանց
մեծ յարգ ստացան և պիտի ստանան: Ռու-
տի գլխաւորներն ու յայտնիները միայն
նանակեմք հօս, որք մեծապէս նպատակ
մատուց եղան աշխարհիս քաղաքակրթու-
թեան ու յստաջողիմութեան գործոյն, ինչ-
պէս են եղը, ձին, ուղտը, սրավար եղջե-
րուն, լաման, շունն, և այլք:

Եզը երկրագործութեան միակ նեցուկն
է. որչափ անդաստանք անմակ ալիտի
մնային եթէ մարդ չունենար իրեն օգնա-
կան այս համբերող ու անխոջ աշխատա-
ւորը: Եզը, կ'ըսէ Պիեֆֆին, ձիու, իշու և
ուղտի պէս յարմար չէ կրել բուռին: Թի-
կանոյ ու մարմնոյն ձեւ արդէն կը ցու-
ցնեն զայն. բայց պարանոցին թանձրու-
թիւնն և ուսոցը լայնութիւնն յարմարաւոր
բարձ են զնա 'ի լուծ: Կարծես թէ մաս-
նաւոր արժի համար ստեղծուած է մար-
մնոյն մեծութիւնն և դանդաղաշարժու-
թիւնը, սրունից չափաւոր բարձրութիւնը,
նոյն իսկ համբերատար ժուժկալութիւնն
յաշխատանս, դաշտերը մշակելու և հողոց
զօրաւոր ու նորանոր կրթելից յաղթելու
համար ստեղծուած էլ ցուցքնն զնա:
Ձին թէպէտ և եզին հաւասար զօրաւոր
է մարմնով, բայց յարմար չէ այգալիսի աշ-
խատանաց. նախ որ սրունքը սաստիկ բար-
ձրն է, չարժեւորներ արտը և բուռն, և համ-
բերութիւնը սակաւ, վասն որոյ և պատ-
րաստ ապաստամբելու իր առաջնորդին գէմ:

Եզը շատ տարիներ աշխատելէն ու ձե-
րանալէն ետքն ալ, կը մատակարարէ մար-
դոյ իր մտովն առողջարար ու անդադորձ
կերակոր մը, և ճարտարութեան արուես-